ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2015

2014/2015 մրցաշրջան

ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2015

2014/2015 մրցաշրջան

ՀՖՖ Արոնագրման բաժին

Օգոստոս 2015թ.

Հարգելի բարեկամներ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը երկու տարի անընդմեջ հանդես եկավ ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության համակարգի մրցաշրջաններն ամփոփող մանրակրկիտ համեմատական վերլուծությամբ, որը, կարծում եմ, բավականին օգտակար եղավ:

Շարունակելով և բարելավելով աշխատանքներն այդ ուղղությամբ, 2014/2015 թվականներին ՀՖՖ Արտոնագրման բաժնի կողմից ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների գործունեության վերաբերյալ կատարվել են բազմակողմանի համեմատական վերլուծություններ: Եվ ահա, այդ վերլուծությունների հիման վրա ՀՖՖ Արտոնագրման բաժինը 3-րդ տարին անընդմեջ հրատարակում է ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն-զեկույցը 2014/2015 մրցաշրջանի համար: Զեկույցը թողարկվում է մրցաշրջանի ավարտից հետո միայն, որպեսզի տրամադրվող տեղեկատվությունը լինի հստակ և ամբողջական:

Այս անգամ ևս զեկույցը ներառում է ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների ներկա կարգավիճակի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվություն, մանրամասն վերլուծություններ թվերի և աղյուսակների տեսքով: Աշխատանքում ներառված են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ակումբների արտոնագրման համակարգը, արտոնագրման վերահսկողության գործընթացը, արտոնագրման արդյունքները, մարզչական որակավորման դասընթացներն ու մարզչական արտոնագրերը, ենթակառուցվածքային չափանիշն ու մանկապատանեկան մարզադպրոցների կարգավիճակը, խաղացողների տրանսֆերներն ու ակումբների ֆինանսական բնութագիրը:

ՀՖՖ-ն հավատարիմ մնալով իր որդեգրած բաց և հրապարակային քաղաքականությանը, շարունակելու է այսպիսի զեկույցների հրապարակումները հաջորդ մրցաշրջաններում ևս: Մենք վստահ ենք, որ նմանատիպ վերլուծությունները դրական ազդեցություն են ունենում ֆուտբոլի զարգացման ճանապարհին:

ՀՖՖ Նախագահ

Ռուբեն Հայրապետյան

Հարգելի բարեկամներ,

ՀՖՖ Արտոնագրման բաժինը ձեզ է ներկայացնում ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծության երրորդ հրատարակությունը 2014/2015 մրցաշրջանի և 2014 ֆինանսական տարվա վերաբերյալ: Այն ամբողջապես վերաբերում է հայկական ակումբային պրոֆեսիոնալ ֆուտբոլին՝ իր մեջ ներառելով ՀՀ Բարձրագույն խմբի ակումբների մասին տեղեկատվություն համեմատական կարգով: Այս փաստաթուղթը հրատարակվում է երրորդ տարին անընդմեջ և շարունակում է հանդիսանալ ամենամյա սկզբունքով հրապարակվող միակ փաստաթուղթը, որը պարունակում է հայկական ակումբների և հայկական ֆուտբոլի վերաբերյալ ֆինանսական, կառուցվածքային, մարզական, ենթակառուցվածքային և այլ կարևոր տեղեկատվություն:

Այս զեկույցն իր մեջ ներառում է 2014/2015 մրցաշրջանի և 2014 ֆինանսական տարվա ընթաքում հավաքագրված ողջ տեղեկատվությունից, որոնք ակումբները ներկայացրել են ՀՖՖ ակումբների արտոնագրման և վերահսկողության գործընթացի շրջանակներում: Այդ առումով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում ՀՀ Բարձրագույն խմբի բոլոր ակումբներին իրենց աջակցության և սույն զեկույցի կազմմանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Վստահ ենք, որ ՀՖՖ ակումբների արտոնագրման համեմատական վերլուծություն զեկույցը կոչված է բարձրացնելու և ավելացնելու հայկական ֆուտբոլում առկա թափանցիկության մակարդակը, ինչը հանդիսանում է ՀՖՖ քաղաքականության անկյունաքարերից մեկը:

ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ

Արթուր Ազարյան

Բովանդակություն

Գլուխ 1. Արտոնագրման գործընթաց 7
Գլուխ 2. Հաճախելիություն 12
Գլուխ 3. ՀՖՖ մարզչական դաբնթացներ և արտոնագրեր 20
Գլուխ 4. Մարզիչներ, ֆուտբոլիստներ և տրանսֆերներ 25
Գլուխ 5. Մարզադաշտեր 32
Գլուխ 6. Եկամուտներ և ծախսեր 34

ALASHKERT
10

ԳԼՈՒԽ 1. ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Արտոնագրման գործընթաց

ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգն ու վերահսկողության գործընթացն ամփոփող այս վերլուծությունը նպատակ է հետապնդում ներկայացնել 2014/2015 մրցաշրջանի արտոնագրման ամբողջական գործընթացը: Վերլուծությունն իր մեջ ներառում է ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի կարևորագույն սուբյեկտներին՝ ՀՖՖ ակումբներին վերաբերող բազմակողմանի տեղեկատվություն: Վերլուծությունը կատարվել է ՀՖՖ ակումբների կողմից ներկայացված արտոնագրման 5 հիմնական չափանիշներին (մարզական, կադրային և վարչական, իրավական և ենթակառուցվածքային) և դրանցից բխող այլ ոլորտներին վերաբերող տեղեկատվության հիման վրա:

Վերլուծության առաջին գլխում ներկայացված է նախորդ 12 մրցաշրջանների ընթացքում ՀՖՖ Ակումբների արտոնագրման ամբողջ գործընթացն ամփոփող տեղեկատվություն: Արտոնագրման գործընթացը բաղկացած է ազգային և ՈՒԵՖԱ-ի արտոնագրերի շնորհումից, ինչը ֆուտբոլային ակումբներին հնարավորություն է ընձեռում համապատասխան արտոնագրի առկայության դեպքում մասնակցել ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը և ՈՒԵՖԱ-ի ակումբային մրցաշարերին:

Վերլուծությունը տրամադրում է տեղեկատվություն մեծամասամբ 2014/2015 մրցաշրջանի և 2014 ֆինանսական տարվա վերաբերյալ, սակայն արտոնագրման բուն գործընթացի մասին գրաֆիկներում ներկայացված է նաև 2015/2016 մրցաշրջանը ներառող տեղեկատվություն: 2015/2016 մրցաշրջանի ազգային և ՈՒԵՖԱ-ի արտոնագրերի շնորհումն արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի հարկ համարեցինք այս վերլուծության մեջ ներառել նաև այդ տվյալները, ըստ այդմ, առաջին գլխում ներկայացված արտոնագրման գործընթացի՝ ժամանակային առումով ամենավերջին տվյալները վերաբերում են 2015/2016 մրցաշրջանին:

2015/2016 մրցաշրջանի համար թե՛ազգային, և թե՛ ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստանալու հայտ են ներկայացրել 8 ակումբներ: Երկու դեպքում էլ արտոնագրի մերժման դեպք չի գրանցվել: Ավելին, ՀՖՖ արտոնագրման գործընթացի պատմության մեջ առաջին անգամ ՈՒԵՖԱ-ի արտոնագիր ստանալու դիմում են ներկայացրել առավելագույն թվով թեկնածուներ, և բոլորն էլ գրանցել են դրական արդյունք: Մերժման որևէ դեպք չի գրանցվել:


8 Ազգային
արտոնագիր
8 ՈՒԵՖԱ-ի
արտոնագիր

2004-2015/2016 մրցաշրջանների ՀՖՖ ակումբների ստացած և մերժված ազգային արտոնագրեր



12 · Ֆյունիկ, Բանանց և Միկա ՖԱ-ները ստացան 12-րդ անընդմեջ ազգային արտոնագրերը

8 · 8-րդ մրցաշրջանն անընդմեջ չի գրանցվել ազգային արտոնագրի մերժման որևէ դեպք

3 · Ալաշկերտ ՖԱ-ն 3-րդ տարին անընդմեջ ստացավ ազգային արտոնագիր

2008-2015/2016 մրցաշրջանների ՀՖՖ ակումբների ստացած և մերժված ՈՒԵՖԱ-ի արտոնագրեր



8 · Փյունիկ, Բանանց և Միկա ՖԱ-ները ստացան 8-րդ անընդմեջ ՈՒԵՖԱ-ի արտոնագրերը

8 · Առաջին անգամ բոլոր 8 թեկնածու ակումբներն էլ ստացան ՈՒՌՖԱ-ի արտոնագիր

1 · Ալաշկերտ ՖԱ-ն 1-ին անգամ ստացավ ՈՒԵՖԱ-ի արտոնագիր

ԳԼՈՒԽ 2. ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Հաճախելիություն

ՀՖՖ Ակումբների Արտոնագրման Համեմատական Վերլուծություն 2014/2015-ի երկրորդ գլուխը նպատակ է հետապնդում ներկայացնել և վերլուծել 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի, Առաջին խմբի և Գավաթի խաղարկության բոլոր խաղերի հաճախելիությունն ըստ ակումբների անցկացրած տնային հանդիպումների:

ՀՀ Բարձրագույն խմբի 2014/2015 մրցաշրջանի առաջնության տնային հանդիպումների ընդհանուր հաճախելիությունը կազմել է 58330 հանդիսական, որը չի գերազանցում նախորդ 2013/2014 մրցաշրջանի ցուցանիշը (75500 մարդ), ավելին, արդեն երկրորդ մրցաշրջանն անընդմեջ այս ցուցանիշը գնալով նվազում է: 2014/2015 մրցաշրջանի ցուցանիշը գրեթե 2 անգամ պակաս է 2012/2013 մրցաշրջանում գրանցված ցուցանիշից (115410 մարդ): Այսինքն՝ երկու մրցաշրջանի ընթացքում ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիությունը նվազել է 2 անգամ: 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցած ակումբներից տնային հանդիպումների ամենաբարձր հաճախելիությունը գրանցել է Գանձասար-Կապան ՖԱ-ն (14500 մարդ), իսկ նախորդ մրցաշրջանում ամենացածր հաճախելիությունը գրանցած Ուլիս ՖԱ-ն (3250 մարդ) այս մրցաշրջանում բարելավել է հաճախելիության ցուցանիշները. Ուլիս ՖԱ-ի տնային հանդիպումներին ներկա է եղել 4580 հանդիսական: Ամենացածր հաճախելիությունը գրանցել է Արարատ ՖԱ-ն՝ 2390 մարդ:

ՀՀ Առաջին խմբի 2014/2015 մրցաշրջանի առաջնության մասնակից թիմերի տնային հանդիպումների հանդիսականների ընդհանուր թիվը կազմել է 10270 մարդ, որը ևս պակաս է նախորդ առաջնությանը գրանցված ցուցանիշից (13440 մարդ): Տնային հանդիպումների հաճախելիությամբ առաջատարն է Գանձասար-Կապան 2 թիմը՝ 2280 հանդիսական, իսկ ետնապահը՝ Արարատ 2 թիմը՝ ընդամենը 860 հանդիսական:

ՀՀ Գավաթի 2014/2015 մրցաշրջանի խաղարկության հաճախելիությունը նախորդ 2013/2014 մրցաշրջանի խաղարկության համեմատ նվազել է շուրջ 33,3 %-ով, 2013/2014 մրցաշրջանին այն կազմել է 13200 մարդ, իսկ 2014/2015 մրցաշրջանին ՝ 8800 մարդ: Ամենացածր հաճախելիությունը եղել է Արարատ ՖԱ-ի անցկացրած հանդիպումների ժամանակ՝ ընդամենը 50 մարդ, իսկ ամենաբարձրը՝ Փյունիկ և Միկա ՖԱ-ների տնային հանդիպումների ժամանակ՝ 900-ական մարդ: ՀՀ Գավաթի 2014/2015 մրցաշրջանի խաղարկության եզրափակիչ հանդիպմանը ներկա է գտնվել 5000 հանդիսական:

2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնության հաճախելիություն





14500
Գանձասար-Կապան ՖԱ

2390
Արարատ ՖԱ

ՀՀ Բրաձրագույն խմբի առաջնությունների հաճախելիություն 2010 - 2014/2015 մրցաշրջաններ





2014/2015 մրցաշրջանի ՀՀ Առաջին խմբի առաջնության հաճախելիություն





2280
Գանձասար-Կապան 2

860
Արարատ 2

ՀՀ Առաջին խմբի առաջնությունների հաճախելիություն 2010- 2014/2015 մրցաշրջաններ





2014/2015 մրցաշրջանի ՀՀ Գավաթի խաղարկության հաճախելիություն





ՀՀ Գավաթի խաղարկությունների հաճախելիություն 2010 - 2014/2015 մրցաշրջաններ





ԳԼՈՒԽ 3. ՀՖՖ ՄԱՐԶՉԱԿԱՆ ԴԱԸՆԹԱՑՆԵՐ և ՄԱՐԶՉԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ

ՀՖՖ մարզչական դասընթացներ և մարզչական արտոնագրեր

ՀՖՖ-ն մշտապես նպատակ է հետապնդել առավելագույնս կանոնակարգել և պրոֆեսիոնալ բնույթ հաղորդել իր կողմից կազմակերպվող կամ անցկացվող ցանկացած միջոցառման կամ դասընթացի: ՀՖՖ սահմանած քաղաքականությանը հնարավորինս մոտ կանգնելու համար Արտոնագրման բաժինը նախաձեռնեց և ավարտին հասցրեց «ՀՖՖ Մարզչական կրթության կանոնակարգը», «ՀՖՖ Մարզչական Բ արտոնագրի ձեռնարկը» և «ՀՖՖ Մարզչական Ա արտոնագրի ձեռնարկը», որոնք իրենց բնույթի մեջ առաջիններն էին: Այս գրքերը հրատարակելուց հետո միայն Արտոնագրման բաժինը հանձն առավ նախապատրաստվել նոր ձևաչափով մարզչական դասընթացների կազմակերպմանն ու անցկացմանը, որը հստակ նպատակ է հետապնդում բարձրացնելու մարզչական կրթության որակը Հայաստանում:

2014 թվականին կազմակերպվել են մարզչական Բ և Ա արտոնագրի հերթական դասընթացները: Ընդհանուր առմամբ կազմակերպվել է 3 Բ և 1 Ա դասընթաց: Քանի որ մարզչական Բ արտոնագրի դասընթացի տևողությունը կազմում է մինչև 2 ամիս, ուստի հնարավոր է դառնում տարվա ընթացքում կազմակերպել մի քանի նմանատիպ դասընթացներ: Մարզչական Բ արտոնագրի դասընթացին մասնակցելու դիմում է ներկայացրել 71 մարդ: Դասընթացներին մասնակցելուց հրաժարվել են 15 դիմորդներ: 2014 թվականին Մարզչական Բ արտոնագիր է ստացել 50, իսկ դասընթացին մասնակցել և արտոնագիր չի ստացել 6 դիմորդ:

Մարզչական Ա արտոնագրի դասընթացի տևողությունն ավելի երկար է (մինչև 10 ամիս), ուստի տարվա մեջ հնարավոր է լինում կազմակերպել ընդամենը 1 դասընթաց: 2014 թվականի մարզչական Ա արտոնագրի դասընթացի դիմորդների քանակը կազմել է 22 հոգի: Դասընթացին մասնակցել է 17 դիմորդ, և բոլոր մասնակիցներն էլ ստացել են Ա արտոնագիր:

ՀՖՖ կողմից տրված մարզչական արտոնագրերը գործում են 3 տարի ժամկետով, ուստի մարզչական արտոնագրերի բնականոն գործունեության ժամկետը երկարաձգելու համար կազմակերպվել են մարզչական Բ և Ա արտոնագրերի թարմացման դասընթացներ: Ստացվել է մարզչական Բ արտոնագիրը թարմացնելու 51 դիմում, որից թարմացվել է 43-ը, իսկ Ա արտոնագրի 15 դիմում և բոլորն էլ թարմացվել են:

Բ արտոնագիր


21%
9%
70%
ստացած արտոնագրեր
մերժված արտոնագրեր
դիմորդներ և դասընթացներին չմասնակցողներ


15
6
50

Ա արտոնագիր


23%
0%
77%
ստացած արտոնագրեր
մերժված արտոնագրեր
դիմորդներ և դասընթացներին չմասնակցողներ


5
0
17

Բ

- **51 դիմում**
- **43 թարմացում**

Ա

- **15 դիմում**
- **15 թարմացում**

ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԶԻՉՆԵՐ, ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐ և ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ

Մարզիչներ, Ֆուտբոլիստներ և տրանսֆերներ

ՀՀ Բարձրագույն խմբի առաջնություններին մասնակից ակումբներում մասսայական բնույթ է կրում 1-ին թիմի գլխավոր մարզիչների փոփոխությունները պայմանագրի ժամկետը դեռ չավարտված: 2014/2015 մրցաշրջանի ընթացքում ևս նմանատիպ փոփոխությունները կրել են հաճախակի բնույթ: Հաջորդիվ ներկայացված են 2015/2016 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից ակումբների 1-ին թիմերի գլխավոր մարզիչների պայմանագրերի գործողության ժամկետները: Նախորդ 2014/2015 մրցաշրջանում բավական բարձր էր մարզիչների հանդեպ ունեցած անվստահության գուրծոնը (62% է կազմում մինչև 1 տարվա պայմանագիր ունեցող գլավոր մարզիչների թիվը): Համեմատության կարգով պետք է նշենք, որ 2015/2016 մրցաշրջանի առաջին հատվածում գրանցվել է այս ցուցանիշի կտրուկ նվազում, և ընդամենը 12% է կազմում մինչև 1 տարի ժամկետով պայմանագիր ունեցող մարզիչների թիվը: 50% դեպքում մարզիչների պայմանագրերի ժամկետի տևողությունը կազմում է 1,5-ից 2 տարի, 25% դեպքում 2-ից 3 տարի և 13% դեպքում 3,5-ից 5 տարի: Գլխավոր մարզիչների 63% ունի մարզչական Պրո արտոնագիր, իսկ 37%-ը՝ մարզչական Ա արտոնագիր:

Դիտարկվել է նաև 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբի առաջնություններում ակումբների թիմերի կազմում հանդես եկած ֆուտբոլիստների թվաքանակը: 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցել է 264 ֆուտբոլիստ: Ամենաշատ թվով ֆուտբոլիստներ հանդես են եկել Արարատ ՖԱ 1-ին թիմում՝ 44 ֆուտբոլիստ, իսկ ամենաքիչ թվով ֆուտբոլիստներ՝ ՄիկաՖԱ-ի 1-ին թիմում՝ 27 ֆուտբոլիստ:

2014/2015 մրցաշրջանի ՀՀ Առաջին խմբի առաջնությանը մասնակցել է 246 ֆուտբոլիստ: Հանդես եկած ֆուտբոլիստների թվով առաջատարը կրկին Արարատ ՖԱ-ն է: Արարատ 2-ում հանդես են եկել 39 ֆուտբոլիստներ, իսկ ամենաքիչ թվով ֆուտբոլիստներ՝ Շիրակ 2-ում՝ 20:

Վերլուծության այս գլխում ներկայացված է նաև 2012/2013, 2013/2014 և 2014/2015 մրցաշրջանների ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությունների ընթացքում կատարված տրանսֆերային առք և վաճառքի ընդհանուր գումարը: 2014/2015 մրցաշրջանի ընթացքում ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից թիմերի ընդհանուր տրանսֆերային ակտիվությունը որպես առք կազմել է 20,5 միլիոն ՀՀ դրամ, որպես վաճառք՝ 25,3 միլիոն ՀՀ դրամ:

Գլխավոր մարզիչների պայմանագրերի տևողություն



Գլխավոր մարզիչների ունեցած արտոնագրեր



2013/2014 և 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակցած ֆուտբոլիստներ



44 · Արարատ

27 · Միկա

33 · Միջին թվաբանական

*2013/2014 մրցաշրջանի համեմատ 2014/2015 մրցաշրջանում ակումբներում ֆուտբոլիստների միջին թվաքանակը նվազել է 5-ով:

2013/2014 և 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Առաջին խմբի առաջնությանը մասնակցած ֆուտբոլիստներ



39 · Արարատ 2

20 · Շիրակ 2

31 · Միջին թվաբանական

*2013/2014 մրցաշրջանի համեմատ 2014/2015 մրցաշրջանում թիմերում ֆուտբոլիստների միջին թվաքանակը նվազել է 7-ով:

2012/2013, 2013/2014 և 2014/2015 մրցաշրջանների ընթացքում կատարված տրանսֆերներ (առք և վաճառք)



2012/2013
- Առք- 16,8 միլիոն դրամ
- Վաճառք- 0

2013/2014
- Առք- 6,5 միլիոն դրամ
- Վաճառք- 85,5 միլիոն դրամ

2014/2015
- Առք- 20,5 միլիոն դրամ
- Վաճառք- 25,3 միլիոն դրամ

ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԶԱԴԱՇՏԵՐ

2014/2015 մրցաշրջանում հայտավորված հիմնական և պահեստային մարզադաշտեր

	Հիմնական	Պահեստային
Ալաշկերտ	Նաիրի մարզադաշտ	Քասախի մարզիկ
Արարատ	Հրազդան մարզադաշտ	Քասախի մարզիկ
Բանանց	Բանանց մարզադաշտ	Բանանց արհեստական խոտածածկով խաղադաշտ
Գանձասար-Կապան	Կապանի քաղաքային մարզադաշտ	Կապանի արհեստական խոտածածկով խաղադաշտ
Միկա	Միկա մարզադաշտ	Աբովյանի քաղաքային մարզադաշտ
Ուլիս	Հանրապետական մարզադաշտ	Աբովյանի քաղաքային մարզադաշտ
Շիրակ	Գյումրիի քաղաքային մարզադաշտ	Իջևանի Արնար մարզադաշտ
Փյունիկ	Ֆուտբոլի ակադեմիա մարզադաշտ	Ֆուտբոլի ակադեմիայի արհեստական խոտածածկով խաղադաշտ

ԳԼՈՒԽ 6. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ և ԾԱԽՍԵՐ

Եկամուտներ և ծախսեր

ՀՖՖ ակումբները ֆինանսական տարվա ավարտից հետո անցնում են ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի (2014թ. խմբագրություն) ֆինանսական չափանիշի պահանջներին համապատասխան ֆինանսական աուդիտ: Ֆինանսական չափանիշի հիմնական պահանջներից է համարվում ակումբների տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացումը, որն իր մեջ ներառում է ակումբի եկամուտների և ծախսերի մասին հաշվետվության ներկայացում:

Համաձայն ՀՖՖ Ակումբների արտոնագրման կանոնակարգի ֆինանսական չափանիշի պահանջների՝ ակումբների կատարած ծախսերը ներկայացվում են որպես 4 հիմնական բնույթի ծախսեր՝ ծառայությունների և նյութերի արժեքներ, աշխատավարձեր և սոցիալական հարկեր, մաշվածություն և ամորտիզացիա և այլ գործառնական ծախսեր: Ակումբների ստացած դրամական միջոցները ներկայացվում են որպես եկամտի 5 հիմնական մուտքեր՝ ՈՒԵՖԱ-ից ստացած համերաշխության գումարներ, հովանավորություն և գովազդ, հեռարձակում, կոմերցիոն և այլ գործող եկամուտներ: Հաշվապահական հաշվեկշիռը ներառում է տեղեկատվություն ակումբների ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի վերաբերյալ:

2014 ֆինանսական տարվա եկամուտների, ծախսերի և հաշվապահական հաշվեկշռի մասին հաշվետվություն են ներկայացրել 2014/2015 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն խմբի առաջնությանը մասնակից բոլոր ակումբները:

Հաջորդիվ ներկայացված են եկամուտների, ծախսերի և հաշվապահական հաշվեկշռի մասին մանրամասն հաշվետվություն՝ համաձայն վերը թվարկված կետերի: Թե՛ եկամուտների, թե՛ ծախսերի և թե՛ հաշվապահական հաշվեկշռի դեպքում ներկայացված են առավելագույն և նվազագույն արդյունքները տոկոսային հարաբերակցությամբ:

Ծախսեր 2014 ֆինանսական տարի



Գանձասար-Կապան 92,5%	Ալաշկերտ 66,6%	Բանանց 30,35 %	Փյունիկ 71,8%
Փյունիկ 1,8%	Գանձասար-Կապան 7,3 %	Գանձասար-Կապան 0,24 %	Շիրակ 4,2%

Եկամուտներ 2014 ֆինանսական տարի



*2014 ֆինանսական տարվա ընթացքում ակումբները չեն ունեցել որևէ եկամուտ հեռարձակումից և կոմերցիոն գործունեությունից:

Արարատ 98,7%	Գանձասար-Կապան 94,75%	Շիրակ 23,5%
Գանձասար-Կապան 5,24%	Արարատ 0%	Միկա 0,025%

Հաշվապահական հաշվեկշիռ 2014 ֆինանսական տարի



2,98 % · Փյունիկ

0,21% · Արարատ

50 % · Բոլոր ակումբները

ARMENIAN
DEVELOPMENT BANK
NIKE

Հեղինակ՝ Ամալյա Գրիգորյան, ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի տեղակալ

«ՀՖՖ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2015» - ի ստեղծմանը նպաստել են՝

- Արմեն Մինասյան, ՀՖՖ Առաջին փոխնախագահ և Գործադիր տնօրեն, ՀՖՖ Ակումբների արտոնագրման համակարգի նախագծի ղեկավար

  ՀՖՖ Արտոնագրման բաժին՝

- Արթուր Ազարյան, ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետ
- Ղազար Հակոբջանյան, ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ, ՀՖՖ Մարզչական կրթության ծրագրի համակարգող
- Տիգրան Վարդանյան, ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ, ֆինանսական փորձագետ
- Նաիրա Աբրամյան, ՀՖՖ Արտոնագրման բաժնի մասնագետ, տրանսֆերների համադրման համակարգի պատասխանատու

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Արտոնագրման բաժին
Խանջյան 27
Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝ +37410541069
Ֆաքս՝ +37410547173
Էլ. փոստ. licensing@ffa.am
Պաշտոնական կայք՝ www.ffa.am